321

1. Քաջ լինենք միշտ, եղբայրնե՛ր,
Հիսուսի պես Տեր ունենք,
Հաղթական, սուրբ և արդար
Զորապետ Հիսուս ունենք:
    Թող սարսափեն դևերը,
    Հայր Աստծո սուրբ զորքն ենք մենք,
    Հիսուսի օրհնյալ Հոգով
    Կնքված սուրբերն ենք մենք:

2. Միշտ խոնարհ լինենք, քույրե՛ր,
Հիսուսի պես Տեր ունենք,
Հաղթական, սուրբ և արդար,
Մեծ եղբայր Հիսուս ունենք:
    Թող սարսափեն դևերը,
    Հայր Աստծո դուստրերն ենք մենք,
    Հիսուսի օրհնյալ Հոգով
    Կնքված՝ սուրբերն ենք մենք:

3. Մենք՝ բոլորս միասին,
Հիսուսի պես Տեր ունենք,
Հաղթական, սուրբ և արդար,
Մեզ սիրող Հիսուս ունենք:
    Թող սարսափեն դևերը,
    Հիսուսի սուրբ հարսն ենք մենք,
    Հիսուսի օրհնյալ Հոգով
    Նշանված կույսերն ենք մենք:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025